
ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ «ԱՄԲՈՂԶ ԹՐԱՖԱԼԿԱՐԸ» ՊԱՏՄՎԱԾԱՇԱՐԸ

ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ Հ. Պ.

Ֆրանսահայ, ինչպես նաև ֆրանսիական գրականության մեջ Արմեն Լյուրենը (Շահան Շահնուր) առանձնանում է ինքնուրույն ձեռագրով և թողած նշանակալից հետազոտով: Նրա հնչեցրած բարձրագույն զգացումները խոր ակոսով են բացում նորագույն գեղարվեստական ըմբռնումը և էպիկական ավանդույթների շարունակականությունը: Այստեղ կարելի է լիապես բացահայտել ազգային մտածողության պատմական և գեղագիտական հիմքերը, հայ մարդու ներաշխարհին ընդհանրապես, այն աղերսները, որոնցով, մի կողմից, գրողը կապվում է տոհմիկ պատմության արմատներին՝ ստեղծելով հայոց դասերից իմաստնացած, հոգևոր կապանքներից ձերբազատ էպիկական հերոսի կերպարը, մյուս կողմից, մասնակցում համաշխարհային գրական գործընթացին՝ նույն հավաքական կերպարում առաջնային դիտելով մարդն ու ամենայն մարդկայինը:

«Վերհայտնության սերունդի Փարիզյան թևին ամենեն մեկը եղավ Շահան Շահնուր,- գրում է սփյուռքահայ գրականագետ Մինաս Թեոլեոյանը,- հատկապես իր պատմվածքին ու արձակին սփյուռքյան նկարագրով, արվեստի բացարձակ հատկանիշներով ու լեզվական առույգ, հաղորդական, գրեթե անսայթաք պատկերով»¹:

Շահան Շահնուրը այն բացառիկ գրողներից է, որը անձնուրաց նվիրվեց գրականությանը: Նա երբեք զանազանություն չդրեց սփյուռքահայ և ֆրանսիական գրականության միջև: Շահան Շահնուրը մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց գրողի իր կոչմանը: Նրա համար գրականությունը, ինչպես ինքն է ասում, «կյանք մըն է, ուր կրնաս գտնել հոգու թրթիռներ, որոնք հաճախ կլցնեն դառնացած, հուսահատ հոգիդ և կյանքի կկոչեն»²:

Շահան Շահնուրը «Հարալեզներու դավաճանությունը» ժողովածուից հետո իր գրական գործունեությունը շարունակեց ֆրանսերենով՝ ստեղծելով բավական արժեքավոր արձակ և չափածո ստեղծագործություններ: Բայց հարալեզները չէ, որ դավաճանեցին: 30-ական թթ. կեսերից գրողը «մեկուսացավ» հայկական միջավայրից:

«Կյանքի իր ամենեն հասուն շրջանը ապրեցավ դարմանատուներու, հիվանդանոցներու և հանգստյան տուներու մեջ: Կտառապեր ոսկրախտե, որ թեն ամլության չղատապարտեց զինք՝ սակայն լուռ տառապանքի, հպարտ մենության մը հոգեկան տազնապանքին մեջ պահեց իր էությունը: Սկսած 30-ական թվականներու վերջեն,- գրում է Մ. Թեոլեոյանը,- Շահան Շահնուր շարունակեց

¹ Թեոլեոյան Մ., Դար մը գրականություն, Կ. Բ, Կահիրե, 1956, էջ 255:

² Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Շահան Շահնուրի ֆոնդ, №7:

ստեղծագործել, առավելապես ֆրանսերենով և Արմեն Լյուպեն գրչանունին տակ՝ «Լա Նուվել Ռեվյու Ֆրանսեզ»-ի և այլ պարբերականներում մեջ»³:

1939 թ. առաջին անգամ ֆրանսիական մամուլում ֆրանսերենով լույս տեսավ Շահան Շահնուրի «Ամբողջ Թրաֆալկարը» պատմվածաշարը՝ Արմեն Լյուպեն ստորագրությամբ: Այն հրատարակվեց ֆրանսիացի նշանավոր գրող, գրաքննադատ Ժան Պոլանի միջնորդությամբ: Պատմվածաշարը ջերմ ընդունելություն գտավ նրբաճաշակ ֆրանսիացի ընթերցողների կողմից և լուրջ առիթներ ստեղծեց գրական գրույցների համար: Հազվադեպ երևույթ էր դա ֆրանսիական արդի գրականության մեջ, մանավանդ որ խոսքը օտարազգի հայ գրողի մասին է: Իհարկե, պետք է հաշվի առնել, որ Արմեն Լյուպենի հաջող մուտքին նպաստեց նաև ֆրանսիական գրականության՝ 30-40-ական թթ. մթնոլորտը, երբ ընթերցողները ծարավի էին նոր անունների: Մեկը մյուսի հետևից սկսեցին լույս տեսնել ֆրանսահայ երիտասարդ գրողի արձակ և չափածո ժողովածուները («Ամբողջ Թրաֆալկարը»՝ 1939, «Ոչնչի որոնում»՝ 1942, «Ծպտյալ ճամփորդը»՝ 1946, «Սուրբ համբերություն»՝ 1951, «Գիշերային փոխադրում»՝ 1955, «Բարձրադիր դարավանդներ»՝ 1957, «Կրակն ընդդեմ կրակի»՝ 1964), որոնք նրան համբավ բերեցին և հաստատեցին նրա տեղը ֆրանսիական գրականության մեջ: Այդ են հավաստում ֆրանսիացի գրողների (Ժյուլ Սուպերվիլ, Ֆիլիպ Ժակոտե, Մաքս Ժակոբ, Պոլ Էյուար) և քննադատների (Ժակ Բերներ, Ժան Պոլան, Անրի Թումայ) կողմից նրան տրված բարձր գնահատականները, ինչպես նաև ֆրանսիական կառավարության շնորհած մի շարք գրական մրցանակները, որոնցից առավել հատկանշականը, մեր կարծիքով, «Ռիվարոլն» է (ֆրանսերենով գրող օտարազգիների համար սահմանված մրցանակ), որը նրան շնորհվել է «Գիշերային փոխադրում» ժողովածուի համար («Ամբողջ Թրաֆալկարը» և մի շարք այլ պատմվածքներ ամփոփվեցին այս ժողովածուում): Արմեն Լյուպենը համարվեց ֆրանսիական արձակի վարպետներից մեկը և իր արժանի տեղը գրավեց ֆրանսիական գրականության մեջ:

Շահան Շահնուրի մուտքը ֆրանսիական գրականություն ֆրանսահայ գրական աշխարհում որակվեց որպես *նահանջ*, ավելին՝ նա ենթարկվեց խիստ քննադատության և նույնիսկ անձնական վիրավորանքների: «Եղան մարդիկ, ափսոս, նաև գրողներ,- փաստում է սփյուռքահայ գրաքննադատ Թորոս Թորանյանը,- որոնք խոսեցան ու գրեցին արտահայտելու համար աժան միտքեր, ու ոչ միայն աժան, նաև անընդունելի:

Շահնուր հեռացավ հայ գրականութենեն, ըսին անոնք, Շահնուր կոնակ դարձուց հայ ժողովուրդին. Լուանթեն մըն է պոռացին ուրիշներ, մեկ փարայի չառներ հայ գրականությունը, փսփսացին բանասարկուներ. ֆրանսերեն գրելով փառք կորոնե ըսողներուն թիվն ալ փոքր չէր. չի կարդար խորհրդային

³ Թեոդեյան Մ., նշվ. աշխ., էջ 255:

գրականություն և նման անվավեր արտահայտություններ ունեցան մարդիկ քիչ մը ամեն տեղ Փարիզեն մինչև Երևան: Դժուար չէ նստիլ եւ աժան խոսքեր հորինիլ...»⁴:

Հակառակ իր դեմ սկսված հալածանքներին՝ Ա. Լյուբենը շարունակեց իր գրական գործունեությունը: Նրա համար գրականությունը վեր էր ամեն ինչից, նա չփորձեց սահմանափակվել ազգային գրական շրջանակում, հաստատակամ քայլերով մուտք գործեց ֆրանսիական գրականություն և ցույց տվեց հայ մարդու աննկուն ստեղծագործական ոգին:

«Ամբողջ Թրաֆալկարը», որ բաղկացած է 15 պատմվածքներից, ավարտուն, կամերային-հոգեբանական գործ է՝ ստեղծված հարուստ կենսանյութի հիմքի վրա: Արտաքուստ հետաքրքրաշարժ ինտրիգ չկա, չկան սոցիալական սուր բախումներ: Պատմվածաշարը հյուսված է առաջին դեմքով, հերոսն ինքն է՝ Շահան Շահնուրը: Նրա հիվանդանոցային կյանքը հարուստ չէ արտաքին իրադարձություններով, սակայն նրա ներաշխարհը, հոգեբանական տեղաշարժերը հավաստի ու պատկերավոր են, այդ պատճառով էլ՝ հետաքրքիր: Պատմվածաշարի հիմքում երիտասարդ հերոսի հիվանդանոցային առօրյան է, նրա պայքարը թոքախտ և ոսկրախտ հիվանդությունների դեմ: Պետք է խոստովանել՝ ժողովածուն կարդացվում է չթուլացող հետաքրքրությամբ: Այս դեպքում արդեն պատմվածքները ինքնուրույն գործեր չեն, այլ պարզապես ամուր կապված են իրար: Պատումի բոլոր շերտերում հեղինակին բնորոշ է ծայրագույն անկեղծությունը, ճշմարտությունը, ուժի պարզությունը: Պատմվածաշարի թեման ճակատագրի հարվածների դեմ մարդու մենության գաղափարն է:

«Ամբողջ Թրաֆալկարում» առկա է գործողության բնական զարգացում, թեև սակավ, բայց գրավիչ պլոժեի պարզ շարադրություն, որ կապված է հերոսի հիվանդանոցային առօրյայի հետ: Նրա հիվանդասենյակը լի է կենդանի հույզերով, տառապանքներով, մարդկային երջանկության կարոտ ճակատագրերով: Այսպես թե այնպես, հերոսի միջավայրում կյանքն է շարունակվում: Մյուս հերոսները գլխավոր հերոսի «թույլտվությամբ» մտնում են իրական շփումների, շարժուն փոխհարաբերությունների մեջ՝ կենսականորեն աշխուժացնելով իրադարձությունների գեղարվեստական պատումը, այն ընթացքը, որ միշտ թվում է՝ հատկանշվում է դանդաղ, գրեթե աննշան շարժով: Այս շրջանակում առանձնանում են հերոսին առնչվող մի շարք պլոժետային գծեր, որոնցից առաջինը հերոսի և մարդասպան հերոսի համեմատական գիծն է («Սալփեթիերին դիմացը»): Մարդասպանը հիվանդասենյակի «բնակիչներից» է: Սեղմ, սակայն կենդանի և ավարտուն է ստացվել նրա կերպարը: Շատախոս այս մարդը, թվում է, թեթև է մոտենում կյանքի հոգսերին, այսինքն՝ մակերեսային է: Իսկապես, սահմանափակ են նրա մտահորիզոնն ու շահագրգռությունները, որոնք գերակշիռ մասով հանգում են գոյության տարրական, ֆիզիկական իմաստներին: «Կան օրեր,- ասում է մարդասպան հերոսը,- երբ ամեն ինչ ծուռ կերթա: Բայց ատոր համար պետք չէ հուսահատիլ, ոչ: Ես, գիտե՞ս, երբ բանս բուրդ կըլլար, կեղբոնական շուկա կերթայի և բեռնակրություն կընեի. զլուխ պահել չէ՞ խնդիրը: Երբեմն աշխատանք չես

⁴ Թորանյան Թ., Վերստին կարդալով Շահան Շահնուրը, Հալեպ, 1971, էջ 12:

գտներ, կպատահի, քանի որ գրավոր թույլտվություն չունիս և պետք է գաղտուկ աշխատիս: Բայց այն ատեն բան մը կխնդրես վաճառականներեն, ճիշտ չէ՞»⁵: Նա չունի մտածողության խորություն, երևույթները վերապրելու ներուժ, այդ «չունենալն» էլ փրկում է շատախոս հերոսին: Իսկ գուցե դա մեզ միայն թվում է. ամենին էլ բացառված չէ, որ մենք՝ ընթերցողներս, մարդասպան հերոսին դեռ լավ չենք ճանաչում, դեռ չենք հասցրել բացել նրա ներաշխարհը: Առհասարակ Շահան Շահնուրի՝ ֆրանսերենով գրված գրեթե բոլոր ստեղծագործություններում կերպարները ավարտուն չեն, գրողը ֆրանսիացի արձակագիրների՝ Ժ. Սուպերվիլի, Ֆ. Ժակոտեի, Մ. Ժակոբի, Ֆ. Սագանի, Ժ. Պոլանի հետևողությամբ միտումնավոր խուսափել է կերպարի զարգացման գայթակղիչ տարբերակներից՝ մեծ տեղ հատկացնելով կերպարների դրվագային պատկերումներին, որոնք լրացնելով իրար՝ տալիս են գլխավոր հերոսի ընդհանուր նկարագիրը: Հավանաբար այստեղ Ա. Լյուբենի ստեղծագործական մտահղացումը ավարտուն չէ. կերպարը «ներսից» բացելու գեղարվեստական ընտրության ժամանակը, հնարավոր է, որ առջևում է: Մարդասպանին ճանաչելու և հոգով հասկանալու միջոցով հերոսը ներքնատեսորեն հասնում է ինքնաճանաչման նոր աստիճանի: Գրող-հերոսը իր համար հայտնագործում է մարդասպանի հետ ճակատագրով բախտակից իր կացությունը և անկեղծորեն մղվում է դեպի նա: Այստեղ ընդգծենք մարդուն անհունորեն սիրելու ջատագովությունը, որն ընկած է պատմվածաշարի բարոյաբանության հիմքում: Չնայած որ Լյուբենի կերպարները ավարտուն չեն, սակայն նրանց խառնվածքը, վարքագիծը բավական տեսանելի են: Գրողը ներքին հայացքով բերում է հերոսների՝ իր տարբերակած գնահատությունները: Ահա խաղամոլի (*«Deus ex machina»*) անմիջական, տաք ուրվագծումը՝ թեթև կյանքի սերը, հաճույքը: Միտում է թղթախաղ և խմիչք: Այս թեթև վրձնախաղերին գումարեք զազրախոսությունը: Խաղամոլի կերպարը հյուսված է յուրատեսակ հեզնախառն ոճով: Հեզնանքը Ա. Լյուբենի կայուն գեղարվեստական հնարաններից է, որ կարելի է նկատել ամենատարբեր առիթներով: «Քաղաքականությունը» պատմվածքում, որն ավելի շատ պատկեր է, որտեղ իրադարձություններ չկան, կան խորհրդանշական գրույցներ՝ մարդու և նրա ստանձնած պատասխանատվության մասին: Պատմվածքում վերհանվում է արձակագրի քաղաքացիական նկարագիրը, որտեղ պատասխանատվությունը սահմանակցվում է բարձր բարոյականության հետ, որի վերջնական նպատակը մարդկանց հոգևոր ապաքինումն է: Հիվանդասենյակը Ա. Լյուբենի համար այն միջոցն է, վայրը, ուր վարպետորեն բացահայտում է ոչ միայն բնավորությունը, այլև ուրվագծում է այն տեղաշարժերը, որ ապրում է բնավորությունը: Պատմվածաշարում առկա է գործողությունների երկու ճյուղավորում: Առաջինում գրողը հպանցիկ պատմում է հիվանդասենյակի տարեց, արդեն կյանքը լավ, թե վատ ճաշակած հերոսների մասին, երկրորդում՝ երիտասարդ հիվանդ հերոսների մասին: Շահնուրը իր լուսարձակը միշտ ուղղում է երիտասարդ հերոսներին, որոնք անմխիթար վիճակում հայտնվել են այստեղ: Նրանցից ոմանք, օրինակ, վարորդ ոստիկանը, ֆուտբոլ խաղացող պատանին

⁵ Շահնուր Շ., Երկեր, գիրք Առաջին, Ե., 1982, էջ 346:

ապաքինվում են, ոտքի կանգնում, իսկ ոմանք էլ՝ Կավոռը («Կավոռը մահը»), երեսունվեցամյա կյանքի ծանրությունից կքած բազմամյա ընտանիքի հայրը («Ամբողջ Թրաֆալկարը»), դեռ կյանք չմտած՝ հրաժեշտ են տալիս կյանքին: Եվ դա կյանքն է. ինչ կարող ես անել: Ուշագրավ է հատկապես տառապյալ երիտասարդ հերոսի կերպարը, որի ուսերին գրողը դնում է դարի խիղճը, բարոյաբանական դասերի ողջ ծանրությունը:

«Շահնուր հասարակ տիպարներ, հասարակ դեպքեր կառնե իրեն նյութ,- մի առիթով իրավացիորեն ասել է Արշակ Չոպանյանը,- ու կհաջողի՝ իր տարողունակ տաղանդին շնորհիվ՝ այդ հաճախ աննշան դեպքերն ու մարդիկը բարձրացնել մինչև տոռա»⁶: Գեղարվեստական մասնավոր փաստը վերաճում է խորհրդանշի. գրողը խորապես դժգոհ է դարաշրջանից, ժամանակից, քանի որ մարդու մեջ նահանջել և առ այսօր շարունակում է նահանջել մարդկային գույթը: Հերոսի ֆիզիկական անգործությունը ցույց է տալիս նրա թուլության ընդհանուր աստիճանը, անկարողության, նաև անտարբերության երևույթի դեմ բարոյական առճակատման ժամանակավրեպությունը: «Կար գործազրկությունը, հիվանդությունը, անոթությունը, ցուրտը և ամբողջ Թրաֆալկարը, կար վարձվիլը, պոչ բռնելը, աղբահորեր պարպելը, սանդուխներ ելլելը, նկուղներ մաքրել և ամբողջ Թրաֆալկարը...»⁷: Անհրաժեշտ է հատկապես ուշադրություն դարձնել հերոսի ապրած «ներկային», որ գուցակշիռ է անցյալի վերապրումին: Նրա համար կյանքը կասեցրել է իր ընթացքը, դարձել տաղտուկ, հարակրկնությունների ձանձրալի շղթա: Արմեն Լյուբենը ֆիզիկապես անկատար իր հերոսներին կերտել է հարուստ ներաշխարհով, բարոյական-զգացական հատկանիշներով, դիմացինի հանդեպ խղճմտանքի, սիրո արբշիռ դրսևորումներով:

Հեղինակը իրապաշտ գրչով, իր յուրահատուկ հումորով պատկերում է հիվանդանոցային երկար ու ձիգ օրերը, հիվանդների ծանր, անմխիթար վիճակը, հիվանդանոցային անբարենպաստ պայմանները, որոնք առաջին իսկ պահից նողկանք ու հիասթափություն են առաջացնում: «Առաջին աշխարհամարտի տարիներուն առժամապես կառուցված այդ փայտաշեն շինությունը այնպիսի ողբալի վիճակի մըն էր հասած, որ հովի ուժգին հորձանքին տակ խուլորեն կճարճատեր, պատուհանները շաչելով կբացվեին, և նույն օրը վիրահատված հիվանդը գանկին վրա կընդուներ տեղատարափը: Առաստաղին ու պատերուն վրա անձրևը աշխարհագրական քարտեզներ էր գծած, ժանգոտ երկաթե վարագույրները մեզի գույն էին հագեր, և անկարելի էր վար քաշել զանոնք: Սըկոն հիվանդասենյակի երկու մասերը իրարմե զատող միջանցքին մեջ իսկ կգտնվեր պետքարանը: Թե ինչ տեսք ուներ քառասնյակ մը հիվանդի կարիքը տեսնող այդ մեկ ու միակ պետքարանը, չեմ կրնար ըսել. իրենց ամենապատկերալից հայիություններն ու ամենաընտիր լուտանքները կթափեին անկե օգտվողները»⁸:

⁶ Անահիտ, Փարիզ, 1930, №3-4, էջ 80: Շահնուր Շ., նշվ. աշխ., էջ 384:

⁷ Շահնուր Շ., նշվ. աշխ., էջ 384:

⁸ Նույն տեղում, էջ 340:

Հեղինակը չի բավարարվել միայն հիվանդանոցի անմխիթար վիճակը ներկայացնելով, ավելին՝ սուր քննադատության է ենթարկել կիսագրագետ բուժանձնակազմին, որին վստահված է մարդկանց կյանքը, և այդ կյանքը նրա համար ոչ մի արժեք չի ներկայացնում: Բժիշկները հաճախ իրենք են դառնում մարդկանց մահվան պատճառը իրենց ոչ ճիշտ ախտորոշումով և հետևաբար՝ սխալ բուժումով: Բժիշկները համար փույթ չէ, թե իրենց պատճառով մեռնում են մարդիկ, այն էլ հաճախ՝ երիտասարդներ, որոնք ժպիտով, անգիտակից ընդունում են մահը: Բժիշկների մեծ մասը անփորձ է և գործին անտեղյակ: Նրանք հաճախ հայտնվում են ծիծաղելի իրավիճակներում: «Բժիշկը կոտրտվող, ժպտուն տղա մըն է, սաստիկ խղճամիտ, բայց ապագա վիրաբույժին պետք եղող համարձակությունը չունի: Նախ սևագրություն մը կընէ, հետո երկրորդը: Վերստին կարդալով գրածը, բառ մը կավելցնէ, ուրիշ մը ետուառաջ կտանէ, կսրբագրէ կետադրությունը: Բայց միշտ ալ սխալ մը թույլ կուտա: Հակառակ այնքան ուշադրության կամ այդ իսկ պատճառով, սոսկալի կսխալի, երբ մաքուրի կքաշէ սևագրությունը: Փոխանակ գրելու՝ վերքը ցավոտ չէ, առանց աչք թարթելու կգրէ. ցավը ցավոտ չէ»⁹:

Իր պատմվածաշարում ֆրանսահայ գրողը առավել ուշադրություն է դարձնում մարդկային բնավորությունների կերտմանը: Արմեն Լյուբենը ռեալիստ գրողի վարպետ գրչով կենդանացնում է մարդկանց՝ ստեղծելով ցայտուն բնավորություններ, տիպական կերպարներ, ինչպես օրինակ՝ Ֆոշը («Ֆոշը և ճնճղուկները»), Կավոշը («Կավոշին մահը»), մարդասպանը («Սալփեթիերին դիմացը»), պատանին («Ուստիկանը»), թափթփուկներ հավաքողը («Քաղաքականություն»), խաղամուկները, ֆուտբոլ խաղացող պատանին («Աստված մեքենայեն»), երեսունվեցամյա մահամերձը («Ամբողջ Թրաֆալկարը») և ուրիշներ: Նրանցից յուրաքանչյուրը մի աշխարհ է, մյուսի համար՝ անընտել, փակ: Ա. Լյուբենի հերոսները գլխավորապես անանուն են: Հերոսների անանուն մասնակցությունը այս կամ այն պատմվածքի գործողությանը ունի միտումի վկայություն: Լյուբենի *ես*-ի մեջ *մենք*-ն ավելի տարածուն է: Անհատի տիպային ընդհանրացման ձգտումը բխում է գրողի ստեղծագործական առանձնահատկություններից: Մենք պիտի վարժվենք կերպարի կառուցման այս եղանակին, անգամ եթե երկրորդական հերոսներին (դրանք շատ քիչ են պատմվածքներում) տրվում են հատուկ անուններ, իսկ կենտրոնական հերոսը «գրկված» է դրանից և ստիպված է «անդեմ» հանդես գալ իրեն հատկացված գեղարվեստական տարածքում: Ա. Լյուբենի անանուն հերոսը իր հետ բերում է բարոյական նոր ըմբռնումներ, անհրաժեշտ փիլիսոփայական-գեղարվեստական մտածողություն: Նրա անհատը հավաքական դիմագիծ ունի: Այսպիսի մոտեցումը պիտի համարել գիտակցված ձևական կառույց, որ կիրառվում է գեղարվեստական բոլոր ժանրերում: Անունից ավելի Ա. Լյուբենը կարևորում է հայացքը: Ֆրանսահայ արձակագրի հերոսները տխուր ու մռայլ մարդիկ չեն. կյանքի կողքով նրանք անցնում են թեթև, մահն անգամ ընդունում են ժպիտով՝ իբրև շնորհ՝ Աստծո կողմից:

⁹ Նույն տեղում, էջ 350:

Կյանքի տառապանքը, այդ տառապանքի ներաշխարհային անդրադարձումները, ապրելու տենչն ու հույսը, հավատը մարդու նկատմամբ, կենսասիրությունն ու լավատեսությունն են կազմում Ա. Լյուբենի պատմվածքների բովանդակությունը:

Ըմբոստացումն ընդդեմ ճակատագրի, դիմագրավումը նրա դաժան, անարդար հարվածներին, դիմակայումը ամեն գնով՝ հանուն մարդու կյանքի, հանուն մարդկային արժանապատվության. սա է, մեր կարծիքով, Լյուբենի պատմվածաշարի հիմնական հավատամքը: Հետաքրքիր է, թե հիվանդության դեմ միայնակ պայքարող երիտասարդը որտեղից է հոգեկան ուժեր քաղում, ինչպես է կարողանում կանգնեցնել ոտքերի տակից փախչող հողը: Մեր ընկալմամբ, գրողի անձնական արիությունը և հավատը իր ոգու ամրության հանդեպ՝ սա է, որ կործանումից փրկում է գրող-հերոսին: Հոգեկան ինքնագնահատման հակված Ա. Լյուբենը իր հիվանդության օրերին գրում էր. «Կյանքը անբացատրելի բան մըն է, որ չես կրնար հրաժարիլ անոր թրթիռներեն. միշտ կձգտես անոր և հաճախ պայքար կու տաս մահվան դեմ, չեմ գիտեր ուրիշներ ինչպես, բայց ես կաշխատեմ երբեք չստածել անոր մասին եւ շուրջս լցնել կենսասիրությամբ մը, շուրջիններուս հաղորդել իմ դրական էլեքտրական լիցքերը...»¹⁰:

«Ամբողջ Թրաֆալկարում» Ա. Լյուբենը ձուլում է ազգայինն ու համամարդկայինը և ընթերցողին ներկայացնում մարդկային կյանքի ռեալիստական ընդհանրացված հետաքրքիր դրվագներ ու բնավորություններ: Պատմվածաշարում կա նաև հայկականը, ազգային գիծը («Երկու խոնարհ ողջույն», «Լռությունը, որ կպոռա»), որը զգացնել է տալիս գրողի մտահոգությունը իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: «Շահնուր անդադար կմտածե իր ժողովուրդին մասին, վկայում է Թորոս Թորանյանը,- գրողը ուր ալ գտնվի, ինչ պայմաններու տակ ալ ըլլա, չի խզվիր իր ժողովուրդէն, իր ցավին մեջ ալ չի մոռանար իր ժողովուրդը»¹¹:

Արմեն Լյուբենի կերտած հայ կերպարները խեղճ ու թշվառ մարդիկ են, մի տեսակ հալածականներ, որ հաճախ ենթարկվում են կյանքի քմահաճույքին և նրա դաժան օրենքներին՝ տառապելով օտար քառուղիներում: Ամեն մի հայի մեջ գրողը տեսնում է թաքնված ողբերգական ապրում: Այսպես՝ երիտասարդ բանվոր հայը ապրելու իր վերջին ճիգերն է գործադրում: Նրա մահվան պատճառը պետք է որոնել առաջին հերթին իր անցած ողիսականի մեջ. «Շատ էր տառապեր Առաջին աշխարհամարտի տարիներուն: Տարագրության և Եդեռնի ժամանակ, հազիվ յոթնամյա, կորսնցուցեր էր իր ամբողջ ընտանիքը: Նահատակ հայերը կողոպտելու համար ջրհոր իջած արաբ հովիվ մը դիակներուն մեջէն հաներ էր զայն, իր խրճիթն էր տարեր և մեծցուցած էր զայն որպէս անապատային ֆելլախ: Ահա ուրկէ իր վիտվածքներն ու թլփատությունը: Երկար թափառումներէն ետքը եկեր հաստատվեր էր Փարիզ, ուր որպէս սևագործ բանվոր կձգներ ապրել»¹²: Գրեթե նույն ճակատագիրն ունի Ա. Լյուբենի մյուս հայ հերոսը: Եթե առաջինն ունի իր

¹⁰ ԳԱԹ, Շահան Շահնուրի ֆոնդ № 9:

¹¹ Թորանյան Թ., նշվ. աշխ., էջ 52:

¹² Շահնուր Շ., նշվ. աշխ., էջ 380:

մշտական աշխատանքը, ապա վերջինս գրկված է դրանից, նրա կյանքը վերածվել է ապարդյուն կերպով աշխատանք որոնելու գեհենի:

Արմեն Լյուբենը հայ մարդուն տեսնում է մերթ իր վեհության գիտակցության մեջ, մերթ էլ անկման խեղճության վիճակում: Նրա անհատը կոտրվում է բիրտ ուժի դիմաց, հաճախ էլ նվաստանում, փոքրանում ինքն իր աչքին: Եթե դարասկզբին Փարիզում հայտնված հայը ապրելու համար կռիվ էր տալիս կյանքի դժվարությունների հետ՝ բարձր պահելով իր ազգային հպարտությունը, ապա տարիներ անց նույն այդ հայը ապրելու, իր ֆիզիկական գոյությունը քարշ տալու համար նվաստանում է, ստորանում օտարերկրացու առջև: «Պետք է ընել այն, ինչ հաճո է ֆրանսիացիներուն,- ասում է Լյուբեն-հերոսը,- վարեն վեր խոնարհ ողջույն տալ, ձեռքը պագնել, եթե կուզես երեսիդ նային և լավ հոգ տանին քեզի»¹³: Գրողը անչափ ծանր է տանում օտարի առջև հայի նվաստացումը, նրա ազգային հպարտության կորուստը, ազգայինից նահանջը և դառնացած հոգով վերստին ահագանգում է նահանջը, «որպես զի վերագտնե հայը իր երբեմնի խիզախությունը, անկախությունը, գտնե ինքզինք մեկ խոսքով»¹⁴:

Մակայն գրողը դրանում համոզված չէ, քանի որ ապրելու տենչը առավել հզոր է, և մարդը անկարող է դիմակայել նահանջին: «Մարդ պիտի ուզեր անկեղծ մնալ,- գրում է Ա. Լյուբենը,- մնալ ամբողջական, մնալ ոտքի, լավագույն աշխարհ մը արտացոլելու վիճակին մեջ գտնվելու համար: Պիտի ուզեր չնվաստանալ, չնվաստացնելու համար արտաքին աշխարհը, որ իր արարչությունն է միայն: Միշտ ձգտել նյութի նկատմամբ ոգիի առաջնության, պիտի ուզեր, որ իր էության մեջ եղող բարձրը կարենար տիրել ու իշխել վարը գտնվողին վրա: Բայց հիվանդությունը կհարկադրեր իրեն խոնարհագույն ողջույնը, որ միշտ վարեն վեր կուղղեր և երբեք վերեն վար: Եվ եթե հետո թևը նորեն կիյնար, ան կիյնար քիչ մը դատարկության մեջ, քիչ մըն ալ մեկ կողմ»¹⁵:

Եվ չնայած դրան՝ Ա. Լյուբենը չի կորցնում վերջին հույսը և կերտում է չնահանջող հայերի կերպարներ: Հետաքրքիր է, որ գրողը վերջին փրկության հույսը տեսնում է ազգային հոգևոր թեմի մեջ, որը դարեր շարունակ հայ ժողովրդի օրհասական պահերին իր ուսերին է կրել ազգապահպանման ողջ ծանրությունը: Լյուբենի կերտած հոգևորական կերպարները օժտված են մարդկային վեհ հատկանիշներով: Նրանք իրենց մարդ լինելու կոչումը տեսնում են մարդկանց դժվար պահերին նեցուկ լինելու, նրանց ոգին ամրապնդելու մեջ: Դրանով է բացատրվում թերևս այն հանգամանքը, որ նրանք հաճախակի այցելություններ են կազմակերպում բուժարաններ, ուր իրենց աղոթքներով, հուսալքված հիվանդներին ապրելու հույս ու հավատ են ներշնչում, իսկ ահա ազգակից հայ հիվանդներին, բացի ապրելու հույսից, ներշնչում են ազգային ոգի՝ նրանց նվիրելով «Հովհաննու հայտնությունը»՝ որպես հայ հոգու սրբազան պահպանիչ:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Թորանյան Թ., նշվ. աշխ., էջ 47:

¹⁵ Շահնուր Շ., նշվ. աշխ., էջ 379:

Անվերապահորեն կարող ենք ասել, որ Շահնուրը երբեք չհեռացավ իր ազգայինից: Նա մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց հայի իր կոչմանը: Շ. Շահնուրի՝ ֆրանսերենով գրված գրեթե բոլոր գործերում առկա է հայկական դրոշմը: Ինչպես նկատել է գրաքննադատ Վազգեն Գաբրիելյանը, «Նրա ֆրանսերենի մեջ կա մի ուրիշ լեզվի հիշատակը», հայերենի մտածողությունը՝ տարագիր հայի տառապանքը»¹⁶:

Շահան Շահնուրը հայի ցավը կարողացավ դուրս բերել ազգային շրջանակներից՝ դարձնելով համամարդկային ցավ: «Խոցված առյուծի տառապանքը ապրեցավ այդ գրողը,- դառնացած հոգով գրում է Թ. Թորանյանը,- իր գրիչը թաթախեց մեր ժողովուրդին տառապանքին մեջ ու գրեց, գրեց անիծելով, բայց ոչ ուրանալով, ինչպես ոմանք հետևցուցին. գրեց արյունելով իր և ուրիշներուն հոգին, մտածելով, թե այդ է ձևը տառապանքեն թմրած հոգիները արթնցնելու, հարվածեց ու հարվածվեցավ, բայց մահվան սեմին անգամ ցած չդրավ իր գրող մարտիկի գրիչը, իր բոցավառ հայրենասերի գրիչը»¹⁷:

Շահան Շահնուրը այն բացառիկ հայ գրողներից է, որն իր ուժերը հավասարապես փորձեց ինչպես հայ գրականության, այնպես էլ ֆրանսիական գրականության մեջ, և պատահական չէ, որ նրա գրական ժառանգությունը արժեքավորվում է երկու առումներով՝ մի կողմից, իր օրերի սփյուռքահայ կյանքի հարազատ ու իրական պատկերումով՝ ասել է՝ ազգային կեցության մեջ նա-հանջի բարոյագիտության խաղացած դերի խոր ու համակողմանի քննությամբ և, մյուս կողմից, եվրոպական գեղարվեստական նորագույն ոլորտներ թափանցելով, իր մնայուն արժեքները ստեղծելով այնտեղ:

ЦИКЛ РАССКАЗОВ ШААНА ШАХНУРА „ВЕСЬ ТРАФАЛЬГАР“

КАРАГУЛЯН А. П.

Резюме

После сборника „Предательство Аралез“, Шаан Шахнур стал писать исключительно на французском языке, создавая на этом языке высокохудожественную прозу и поэзию. С 1939 года на протяжении почти тридцати лет на страницах французской периодики публиковались его рассказы, объединенные в цикл „Весь Трафальгар“, закрепив за ним имя Армена Любена.

¹⁶ Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Ե., 1987, էջ 311:

¹⁷ Թորանյան Թ., նշվ. աշխ., էջ 11: